ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ
МЭРИЯ г. АЛАВЕРДИ
REPUBLIC OF ARMENIA REGION OF LORI
MUNICIPALITY OF ALAVERDI

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա
1702, Алаверди, З. Андраника 8А
1702, Alaverdi, Z. Andraniki 8A
☎ (253) 2-41-00
Fax (253) 2-41-00
E-mail: alaverdi@alaverdi.am
URL: www.alaverdi.am

№ 1049

«07» 11 2011թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ է ուղարկվում Ալավերդի համայնքի ավագանու 2011թ. թիվ 44-Ա, թիվ 45-Ա և Ալավերդու քաղաքապետի 2011թ. թիվ 256-Ա, թիվ 257-Ա, թիվ 258-Ա, թիվ 259-Ա, թիվ 260-Ա որոշումները:

Առդիր՝ 7 էջ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

Կատ.՝ Ա. Էվոյան

2-41-02

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Ձ. Անդրանիկի 8Ա

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 44-Ա
## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04.11.2011թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ալավերդի համայնքի 2012 թվականի «Բնական միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր»-ը հաստատելու մասին
(Զեկ.՝ Ա. ՎԱՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Ալավերդի համայնքի 2012 թվականի «Բնական միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր»-ը (համաձայն հավելվածի):

Որոշումն ընդունվել է.

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Վ. ԷՎՈՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 45-Ա

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04.11.2011թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի 3-րդ զանգվածի շրջանաձև փողոցի անվանակոչման թույլտվության մասին
(Զեկ.՝ Ա. ՎԱՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշմամբ, Լոռու ազատագրման 90-ամյակի առթիվ

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Համաձայնություն տալ Սանահին Սարահարթ թաղամասի հյուրանոցամերձ հրապարակից սկսվող 3-րդ զանգվածի շրջանաձև փողոցն անվանակոչել գեներալ-մայոր Հարություն Գրիգորի Օսիպյանի անվամբ:

Որոշումն ընդունվել է.

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Վ. ԷՎՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 260-Ա

02 նոյեմբերի 2011թ.

Համայնքային սեփականություն ճանաչված ավտոտնակի բաժնային մասը, մառանը և նրա զբաղեցրած հողամասը օտարելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. № 912-Ն որոշման 34-րդ, 47-րդ կետերով և հաշվի առնելով, որ Ռաֆայել Հովհաննիսյանը ընդունել է ավտոտնակի բաժնային մասը, մառանը և նրա զբաղեցրած հողամասը ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը և վճարել է օրինականացման համար սահմանված վճարները

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամաս թիվ 6/20 Ա հասցեում գտնվող քաղաքապետի 13.09.2011թ. թիվ 204-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված 9.83 քմ մակերեսով ավտոտնակի բաժնային մասը՝ 10813.0 (տաս հազար ութ հարյուր տասներեք) դրամ, 43.7 քմ մակերեսով մառանը՝ 48070 (քառասունութ հազար յոթանասուն) դրամ և նրա զբաղեցրած 53.53 քմ հողամասը՝ 43360 (քառասուներեք հազար երեք հարյուր վաթսուն) դրամ արժեքով ուղղակի վաճառքով օտարել Ռաֆայել Հովհաննիսյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի բաժնային մասի, մառանի և հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

Հիմք՝ Քաղաքապետի 13.09.2011թ. թիվ 204-Ա և 13.10.2011թ. թիվ 236-Ա որոշումները, վճարման անդորրագրերը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
02.11.2011թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 259-Ա

02 նոյեմբերի 2011թ.

Փոստային հասցե տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

Ալավերդի քաղաքի Թումանյան փողոց թիվ 20 հասցեում գտնվող, «ԿԱՏԱ» առևտրի կենտրոնի շենքից առանձնացվող 10.9 քմ մակերեսով թիվ 17 տարածքին տրամադրել Թումանյան փողոց թիվ 20/17 փոստային հասցե:

Հիմք՝ Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
02.11.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

ԹԻՎ 258-Ա

01 նոյեմբերի 2011թ.

«ՀՀ ԼՄԱՔ-ԱՇՁԲ-11/21բ» ծածկագրով բաց ընցակարգի գնահատող հանձնաժողովի լուծարման մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգով և հիմք ընդունելով ՀՀ ԼՄԱՔ-ԱՇՁԲ-11/21բ ծածկագրով բաց ընցակարգի գնահատող հանձնաժողովի որոշումով հաստատված հաշվետվությունը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Լուծարել «ՀՀ ԼՄԱՔ-ԱՇՁԲ-11/21բ» ծածկագրով բաց ընցակարգի գնահատող հանձնաժողովը:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքապետարանի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ Արթուր Հովհաննիսյանի վրա:

Ա. Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
01.11.2011թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 257-Ա

31 հոկտեմբերի 2011թ.

Փոստային հասցեներ տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ալավերդի քաղաքի Թբիլիսյան խճուղու հարավային մասում գտնվող, 143-002 ծածկագրից 110.0 քմ մակերեսով հողամասին տրամադրել Թբիլիսյան խճուղի թիվ 12/1 փոստային հասցե:
2. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թիվ 1/13 շենքի հարավ-արևմտյան մասում գտնվող 72.5 քմ մակերեսով հողամասին տրամադրել Սանահին Սարահարթ Գայի փողոց թիվ 22 փոստային հասցե:
3. Ալավերդի քաղաքի «Ալավերդու արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ի շենքի հյուսիսային մասում գտնվող 16.12 քմ մակերեսով հողամասին տրամադրել Զորավար Անդրանիկ փողոց թիվ 97 Ա փոստային հասցե:

Հիմք՝ Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
31.10.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

ԹԻՎ 256-Ա
31 հոկտեմբերի 2011թ.

Համայնքային սեփականություն ճանաչված
առևտրի սրահը օրինականացնելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 5-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ կետով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված առևտրի սրահը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում է քաղաքաշինական նորմերը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Ջրավազան փողոց թիվ 3 Գ հասցեում գտնվող, 1996թ. ինքնակամ կառուցված, քաղաքապետի 30.09.2011թ. թիվ 223-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված՝ 15.39 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը՝ սպասարկման համար զբաղեցրած 15.39 քմ հողամասով:
2. Առևտրի սրահի զբաղեցրած 15.39 քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ որպես բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության հողատեսք:
3. Առևտրի սրահի զբաղեցրած հողամասը ընդրկված չէ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում:
4. Հանձնարարել քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գագիկ Սոխակյանին՝ ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Սամվել Աբգարյանին, օրինականացված առևտրի սրահը և զբաղեցրած հողամասը ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գագիկ Սոխակյանի վրա:

Հիմք՝ Քաղաքապետի 30.09.2011թ. թիվ 223-Ա որոշումը, համայնքային սեփականության իրավունքի N 2853908 վկայականը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

ք. Ալավերդի
31.10.2011թ.